


5522

ЗК ПІІ

С-260



ՀԻՐԱՆՁԱԴԵ Ծ Ն Ա Ր - Դ Ո Ս

Յ Ե Ր Կ Ո Ւ  
Բ Ո Լ Շ Ե Վ Ի Կ



Պ Յ Տ Հ Ր Ա Տ

1935

329.159.  
6-66

23

19 AUG 2005

ՅԱՌՈՒՉ ՇԻՐՎԱՆՁԱԳԵ Ծ ՆԱՐ-ԳՈՍ

Շ-262

Կր. 66

14 NOV 2008

# Յ Ե Ր Կ Ո Ւ Բ Ո Ւ Շ Ե Վ Ի Կ

Ս. ՅԱՀՈՒՐՅԱՆ Ծ Ս. ՍԳԵՆԳԱՐՅԱՆ

~~ԵՐԱՅԱՆ~~




1102  
62

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ը Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ՅԵՐԵՎԱՆ

1935




15 JUL 2013

5522

7

11:30

Պատ. խմբագիր՝ Գ. Հովհան  
Տեխ. խմբագիր՝ [redacted]  
Սրբագրիչ՝ Մ. Սուրյան



2911  
38

### Յ Ե Ր Կ Ո Ի Խ Ո Ս Ք

Հետաքրքիր ու ուշադրավ են մեր գրականության  
յերկու մեծանուն վիպասանների հուշերը Ս. Ծա-  
հումյանի ու Ս. Սպանդարյանի մասին: Մենք վար-  
չեցինք առանձին զրբույկով հրատարակել այդ հու-  
շերը, ի նկատի ունենալով նրանց յեղակի տեղն ու  
բացասիկ նշանակությունն այն բաղձաքանակ հիշ-  
ողությունների շարքում, վոր գրվել են Ծահումյանի  
ու Սպանդարյանի մասին:

Ծիրվանդակեն «Մի հանդիպում» վերնագրերը կրող  
այս հուշվածը գրել է Փարիզում 1924 թ. 15-ին ողոս  
ուստի: Տպագրվել է նույն տարվա սեպտեմբերի 13-  
ին «Բանվոր Պարիզ» թերթում: Ապա արտատպվել է  
Ամերիկայի «Պրոլետար» թերթում, 1924 թ. 4-ին ղեկ  
տեմբերի: Առաջին անգամ մեկ մաս տպագրություն  
տարվ այդ հուշվածը, անհրաժեշտ ենք համարում  
նրա մեջ շնչափված փաստերը ճշտելու համար մի  
փոքրիկ դիտողություն անել:

1902 թվին Ռիզայի Պոլիտեխնիկ Ինստիտուտի ու-  
սանող Ստեփան Ծահումյանը գալիս է Թիֆլիս: Այդ

նույն տարում թիֆլիսում պատրաստութուն և տեսնը վում Ղ. Աղայանի գրական ու հասարակական գործունեություն ջառանամյակը տոնելու: Ուսանող Եահումյանը մի ճառ և գրում Աղայանի հորեկյանի հանդիսավոր նիստին կարգալու համար: Եիրվանդադեն, վորպես այդ հորեկյանական հանձնաժողովի նախագահ, պատմում և, թե ինչպես ուսանող Եահումյանը մտանում և իրեն ու թուլլավություն խընդրում վողջույնի ճառ ասելու համար: Նախապես ծանոթանալով ճառի բովանդակության հետ և տեսնելով նրա ծայր աստիճան ջաղաքական ընույթը, Եիրվանդադեն մերժում և խոսք տալու Եահումյանին: Այդպես գրում և ինքը Եիրվանդադեն իր այս հիշողության մեջ:

Մեզ հասած ստույգ տեղեկությունների համաձայն, Եահումյանը յերույթ ունեցել և այդ հորեկյանական հանդիսին, սակայն ընդհատվել և հորեկյանական հանձնաժողովի կողմից: Թեև Եահումյանին հնարավորություն չեն տվել վերջացնելու իր ճառը, այնուամենայնիվ այդ ճառի կարգացում և ջերը ունեցել են խոշոր ազդեցություն հանդիսականների վրա, առաջին հերթին իրեն- Ղ. Աղայանի վրա, վորն այն կարծիքին և յեղել, վոր Եահումյանին պետք և թուլլ տային, վոր նա վերջացներ իր ճառը: Բարեբախտաբար խմորատիպ այդ ճառից մի որինակ հասել և մեզ և շուտով տպագրության կհանձնվի Եահումյանի մյուս գրաքննադատական հոդվածների հետ միասին:

Նար-Դոսն իր ծայր աստիճան հետաքրքիր հուշերը գրել և Սպանդարյանի մահվան տասնամյակի

առթիվ 1926 թվին և տպագրվել և Անդրկովկասի հայ և մյուս ժողովուրդների պարբերական մամուլում:

Նար-Դոսն այդ հոդվածն արժեքավոր և նրանով, վոր նա ընդգրկում և Սպանդարյանի կյանքի այնպիսի մի շրջան, վորի մասին մինչև հիմա և վոչ մի սող չի գրվել: Մեծ վարպետը, յուր գրչին հատուկ ճիւղնությամբ, պատմում և Սպանդարյանների ընտանիքի այն տարիների մասին, յերբ արդեն աճում ու կոխվում էր ապագա բոլշևիկի Սուրեն Սպանդարյանը:

Գեղարվեստական խոսքի յերկու մեծանուն վարպեաների հուշերը հեղափոխական շարժման յերկու խոշոր ներկայացուցիչների մասին անկասկած հետաքրքիր են, և մենք սիրով հանձնարարում ենք այն ընթերցողների լայն մասսաներին:

Գ. ՀՈՎՆԵՆ

ՇԻՐԱԿԱՆԶԱԴԵ

ՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ...

Անցել է մոտ քսան տարի այն որից: Ճիշտ թվականը չեմ հիշում:

Ղաղարոս Աղայանցի քառասնամյա գրական գործունեության հորելյանն էր: Իսկապես դա հորելյան չէր, ալլ մի պարզ ընկերական հացկերույթ: Բռնակալ Իշխան Գուլիցինի բռունցքն այդ ժամանակ իր գերագույն ուժի մեջ էր և ամեն մի հայ հասարակական տոնախմբություն արգելված էր: Սակայն վոստրիկանապետը բարի յեր յեղել թույլ տալու մի հացկերույթով պատվելու ծերունի Աղայանցին:

— Պայմանով, վոր հացկերույթի ժամանակ վոչ մի քաղաքական բովանդակությամբ խոսք չարտասանվի, — ասաց նա ինձ, վոր դնացել էյի այդ թույլատվությունը ստանալու:

— Յերաշխափորում եմ, վոր չի արտասանվի, բոլոր ճառերը կունենան գրական բովանդակություն:

Սակայն յես գիտեյի, վոր բարի վոստրիկանապետը չի բավականանալու իմ յերաշխափորությամբ և

հացկերուլթիին ներկա յե լինելու նրա դադանի ածա-  
նը: Այս իսկ պատճառով յես նախ քան հացկերուլթը  
խոսողներին զգուշացրի ու գրավոր ճառերը մեկ մեկ  
կարգացի: Բարեբախտաբար ուղերձների և ճառա-  
խոսների թվից մեծ չեր: Հարյուրավոր բարձության  
ուշադրությունն ամենի հացի սեղանով եր գրաված,  
քան ճառերով:

Ինձ մոտեցավ բարձրագույն տեխնոլոգիական  
զպրոցի համազգեստով բավականին բարձրաստակ,  
չառ համակրելի և նույնիսկ գեղեցիկ և խոհուն  
գեմքով մի մոտ 20 տարեկան յերիտասարդ, մի քիչ  
գունատ և հուզված:

— Թույլ ամէք ինձ յեմ շնորհավորելու, ասաց  
նա մաքուր ու գրական բարբառով:

— Պիտի խոսն՞ք:

— Վո՛չ, պիտի կարգամ, ահա այս թուղթը:

— Թույլ ամէք ինձ աչքի անցկացնելու:

— Ատեք:

Յես կարգացի թուղթը: Դա շնորհավորում չեր,  
այլ մի ստեղծի հարձակողական և անվերապահ  
քննադատություն վոչ Աղայանցի դորձերի, այլ Ռու-  
սիայում այդ ժամանակ տիրող քաղաքական կացու-  
թյան: Յերիտասարդը պնդում էր, վոր ամեն մի  
գրական գործունեություն դատապարտված է  
ամլության ներկա պայմաններում: Վոչ մի գրակա-  
նություն չի կարող դարգանալ և առաջագիժեր և վոչ  
մի գրող չի կարող ազատ արտազրել, քանի վոր ցա-  
րական ուժիմը կա:

Հետեմարար յուրաքանչյուր քաղաքացու ժամա-  
նակակից միակ բարոյական պարտականությունն է

«նախքան հորեկյաններ տանելը», ջանալ այդ ուժիմը  
ստապալելու:

— Մերելիս, ասացի յերիտասարդին, վերա-  
դարձնելով նրան իր թուղթը, — դժբախտաբար յես  
չեմ կարող թույլ տալ, վոր դուք կարգաք այդ թուղ-  
թը:

— Ի՞նչու, — հարցրեց նա պարզամտությամբ:

— Նայեք այն կողմը: Տեսնու՞մ եք այն չեկ մի-  
րուքավոր պարսին, նա վստահանության դադանի  
դորձակալն է:

— Ե՛հ, ի՞նչ անենք: Նա սուս է, իսկ իմ գրածը  
հայերենն է:

— Այս սուս է, բայց հայերեն դիտե: Ինձ խու-  
զարկելու ժամանակ նա յեր կարգում իմ ստացած  
հայերեն նամակներն ու թարգմանում: Յեթե յես  
թույլ տամ կարգալու բովանդակությունը Ձեր թըղ-  
թի, տելեֆոնով իսկույն կհաղորդի ուր հարկն է և  
հանդեսը կխափանվի:

— Թող խափանվի, միթե՞ շատ կցավենք:

— Կցավե՞մ ձերունու համար, ինչո՞ւ այս հա-  
մեստ տանախմբությունը չբացնել և հորեկյարին  
դառնացնել:

Յերիտասարդը թուղթը գրեց իր գրպանը, հեռա-  
ցավ տխուր ու գունատ և նստեց հացի սեղանի հե-  
ռավոր անկյունում: Յես գզացի, վոր չափազանց  
վշտացրի նրան, բայց ի՞նչ կարող եյի անել: Գիտե-  
լի, վոր նրա գրվածքի մեջ կա մի սուր և դատր  
ճշմարտություն, արտահայտված վոչ նրբորեն, բայց  
վերին ատտիճանի անկեղծ: Վորքան հիշում եմ, վոր-  
տացյալ ուսանողը նույնիսկ հացին ջմամնակցեց:

Այդ որից անցան տասնյակ տարիներ: Սակայն ուսանողի դեմքը չեմ մոռանում: Նրա խելացի, գու- նատ և մուսյլ դեմքը սպայտորվել էր իմ մեջ: Յես շարունակ զգում եյի խղճի մի տեսակ խայթ ամեն անգամ, յերբ հիշում եյի այդ հոգեշունչ կերպարան քը:

Ինչու հավատացյալին արգելեցի իր հավատը քարոզելու, թող հանդեսը խախտնվեր, թող իսկ ձեր- բակարվեր, միայն թե ճշմարտութունն արտասան- վեր այդ բերանից:

Ռուսական հեղափոխության յերկրորդ տարին էր: Գնացել եյի Բագու հեռավոր ճանապարհորդու- թյունս սկսելուց առաջ մնաք բարով ասելու իմ քույրերին: Աղբբեջանի կարմբարեմ, «Անկախության» սրերն եյին: Դրությունը վերին աստիճանի խախուտ էր, որ որի վրա սպասվում էր Հանրապետության տապալումը: Մեծամասնականները սպանում էյին Կովկասին: Արդեն Բագվի մեջ սկսվել էր նրանց շարժումը:

Մի անուն էր հնչում հրապարակի վրա ամենից բարձր, ամենից զորեղ: Վոմանք անիծում էյին այդ անունը, վոմանք որհնում, բայց հակառակորդներն անդամ չեյին հանդգնում մի ամենաչնչին սավեր ձգելու այդ անվան վրա:

— Ֆանատիկոս է, կատարյալ հավատացյալ, մոլորված է, բայց բարոյապես մաքուր, անարատ, անարժար, — ասում էյին ամենքը միաբերան:

Գործերս վերջացնելով ուղեւորվեցի Թիֆլիս: Մտնելով յերկաթուղու կայարանը, հանկարծ ակամա կանգ առա մի բարձրահասակ տղամարդի առջեմ: Նա

զալիս էր դեմ ու դեմ, գլուխը բարձր պահած, խը- բոխտ, համարձակ քայլերով: Մոտովս անցնելով, նա ինձ վրա ձգեց մի խորը հանդիմական հայացք: Դա այն ուսանողն էր, վորին յես թույլ չեյի տվել թուղթը կարդալու Աղայանցի հոբելյանին:

— Նա յե, յես ճանաչում եմ...

Դա Մտեփան Շահումյանն էր:

Այդ որից հետո յես այլևիս չ'հանդիպեցի այդ մարդուն:

15-ն Ոգոստոսի - 1924 թ. Փարիզ.

ՆԱՐ-ԴՈՍ

ՀԱՅՐԸ ՅԵՎ ՎՈՐԴԻՆ

Սուրեն Սպանդարյանի մահվան 10-ամյակի առթիվ կուզե՞յի համառոտակի մի գուզահեռ քաշել նրա և իր հոր - Սպանդար Սպանդարյանի միջև, իբրև պատմական յերկու անվանի անձնավորությունների, վորոնցից յուրաքանչյուրն իր հասարակական ուրույն գերը խողաց մեր կովկասյան և մասնավորապես հայկական իրականության մեջ:

1167  
Սպանդար և Սուրեն Սպանդարյաններ: Հայր և վորդի - յերկու անտիպող, յերկու հակառակ բեմբեռ, յերկու տարամերժ անձնավորություն, մեկը մյուսին ժխտող: Մեկը թունդ աղբայնական, մյուսը մոլեռանդ միջաղբայնական: Հայրը վորդու, վորդին հոր դեմ:

Հայրերի և վորդիների մշանջենական պատմությունը...

Սուրենը պայքարում եր իր խմբադիր հոր դադափարների և առհասարակ նրա թերթի ուղղության դեմ վոչ միայն հասուն հասակում, յերբ նա իր աշ-



կարհասալացքով և բնույթով արդեն կազմակերպված բողջեմիկ եր՝ աներեր իր դադափարնեքով, այլ և — դեռևս պատանի ժամանակ, յերբ տակավին նոր էլին բացվում նրա գիտակցութեան աչքերը, յերբ նա նոր եր սկսում գիտել իր շրջապատն իրեն հասուկ սուր քննազատական հայացքով, յերբ նոր եր սկսում իր բնածին խելքով ինքնուրույնարար դատել ժամանակակից հարցերի և յերեմութները մասին:

Ինչ թե շատ մտախի լինելով Սպանդարյանները բնամեական կյանքին, յերկար տարիներ շփվելով նրանց հետ, շատ անգամ և պատահել, վոր յես ներկա եմ յեղել բուն ու համառ, յերբեմն պարզապես կրքոտ միճարանությունները՝ խմբազիր հոր և գիմնադիտա վորդու միջև՝ ժամանակակից հրատապ խնդիրները մասին, միճարանություններ, վորոնց ժամանակ հայրը յերբեմն զայրացած շարտում եր վորդու յերեսին՝ «սո՛ւս արա, լակոտ, վոչինչ չես հասկանում» բառերը: Բայց Սուրենը սուս անողը չէր, համասութեան կողմից իր հոր գովակն եր: Այլ վեճարանություններին յերբեմն մասնակցում էլին Սուրենի յերկու ավագ յեղբայրները, իրեն իրենց հոր գաղափարի պաշտպաններ, և, չնայելով յերեքի (հոր և յերկու մեծ վորդիներին) միասնական գրոհին, վորդիկ Սուրենն իր ճարտար լեզվով և արզումենտացիայով յեթե չէր հաղթում, չէր ել հաղթվում: Ու յերկու կողմերն ել թեւ քարի պես մնում էլին անսասան կանգնած իրենց տեսակետների վրա:

Պետք է ասեմ, վոր Սուրենը, բացի բնածին ուշիմությունից և աչքարացությունից, հորից ժառանգել եր և նրա անդիջողականությունը հակառակորդի

դեմ, իր հայացքներին հաստատուն մնալը, համառ դիմումը դեպի իր նպատակակետին: Հասարակական ջիւղ, խիզախ, բողոքող, ըմբոստ վողի, սակայն այդ բոլորը միանգամայն այլ ուղղութեամբ, քան հայրը: Սրան պետք է ավելացնել և նրա ծայր աստիճան բնութեցատիրությունը, վորը նկատվում եր նրա մեջ դեռևս մանուկ հասակից: Գրքերը լավում եր ուղղակի մի շնչում: Հարյուրավոր յերեսանոց վորեւե հաստիոր մի գիրք նրա համար մի յերկու որվա պաշար եր: Յեվ հաղիվ թե ուս ժամանակակից գրականութեան մեջ նշանավոր մի աշխատութեան լինելը — գեղարվեստական թե գիտական, — վոր նա կարգացած չլինելը: Այդ գրքերի մեջ մարքսիստական աշխատութեանները, անշուշտ, հետին տեղ չէլին բռնում: Յեվ, հարկավ, վերջիններիս ազդեցութեան տակ եր մեծ մասամբ, վոր Սուրենը դեռևս պատանի հասակից կամաց կամաց մշակում, ձեւավորում, միս ու արյուն եր դարձնում իր ինտերնացիոնալ գաղափարները, վորոնց նա այնուհետև, հասուն հասակում, այնպես մոլեռանդաբար կառչած մնաց, հակառակ այն թուեղ ազգայնական մթնոլորտին, վոր տիրում եր իր շուրջը և ընտանիքում՝ իր հրապարակախոս հոր շնորհիվ:

Յերկու հակադիր բեվեռներ, տարիների ընթացքում, քանի դնում՝ այնքան հեռանում էլին իրարից, նրանց բաժանող վիճը քանի դնում՝ այնքան խորանում եր մինչ այն աստիճան, վոր յես կասկածում եմ, թե վերջը յերբ գաղափարական անտագոնիզմն արդեն կատարյալ եր և յերբ յես կորցրի նրանց իմ տեսողութեանից, պահպանվե՞լ եր արդյոք հոր և

վորդու մեջ նույնիսկ հայրական ու վորդիական հա-  
րադատութեան բնական զգացումը:

Թերևս այդ անբնական և տարրերնակ շլիներ մա-  
նախնեղ այն պատճառով, վոր դադարաբազու իրաջ  
հակառակ լինելով հանդերձ՝ պատմական կյանքի  
զոտ ալիքներն յեկան իրենց հերթին Փիղիկապես եւ  
անջատելու նրանց իրարից, հորը շարտելով արտա-  
սահման՝ սովորած լինելու այնտեղ տաքուկ անկյուն-  
ներում նստած հայ «ազգասեր» հարուստների աչքի  
առջև, վորոնց խղետուզն եր նա և վորոնց սեղանի  
փշրանքներովն եր պահպանում իր թերթը, իսկ վոր-  
դուն նետելով դաժան Սիրիի խորքերը՝ կամաց կա-  
մաց հյուսիսելու Փիղիկապես և մեռնելու այնտեղ՝  
մուրազին չհասած...

Մինչդեռ շատ ժամանակ չեր մնում, վոր նա  
հասներ իր մուրազին:

Մուրենը մեռավ 1916 թվականի սեպտեմբերին,  
իսկ 1916 թվականի սեպտեմբերն արդեն ծեծում եր  
1917 թվականի Հոկտեմբերի դուռը, յերբ այնուհե-  
տեմ նա իրականացած պիտի տեսներ իր փափազած  
յերազները:

1926 թ. սեպտեմբերի 28. Թիֆլիս.



« Ազգային գրադարան



NL0188568

